ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԲՄԱՊՁԲ-20/3-1

ք. Երևան 24-ը սեպտեմբերի 2019թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «ՍԼԱՅՔ» ՓԲԸ-ն (կոնսորցիում Սամվել Տեր-Գրիգորյան Ա/Ձ-ի հետ), ի դեմս գլխավոր տնօրեն Ա. Ահարոնյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի առավելագույն գինը կազմում է 145033268 (հարյուր քառասունհինգ միլիոն երեսուներեք հազար երկու հարյուր վաթսունութ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Մատակարարին վճարվող գումարը որոշվում է հետևյալ բանաձևով՝

Մ.Վ.Գ. = **Տ.Ն.Գ.** x **Ա.Գ.** / **Ն.Գ.** x **Մ.Ա.**, որից՝

Մ.Վ.Գ. – մատակարարին վճարվող գումար.

Տ.Ն.Գ. - առանձին տողի միավորի նախահաշվային գինը.

Ա.Գ. – 103146430,2.

Ն.Գ. - 110910140.

Մ.Ա. – մատակարարված ապրանքի քանակը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 10-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **հինգ** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝

մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Քանի որ պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով Սամվել Տեր-Գրիգորյան Ա/Ձ-ի հետ, ուստի այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.7 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.14 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ ինժեներական զորքերի վարչությունը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ՍԼԱՅՔ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5	ՀՀ, ք. Վանաձոր, Թևոսյան 3
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 220053333435000
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 06901582
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	Գլխավոր տնօրեն
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	Ա. ԱՀԱՐՈՆՅԱՆ

Հավելված N 1
N ԲՄԱՊՁԲ-20/3-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	Չ/մ	Քանակը	Առավելագույն գումարը (ՀՀ դրամ)	Մատակարարումը 2019թ. ըստ եռամսյակների, ընդ որում՝
					4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 20.12.2019թ.
1	զանազան պահեստամասեր (Ինժեներական /ճանապարհաշինական/ տեխնիկայի վերանորոգման պահեստամասեր)	դրամ	1	145033268	145033268

Նշանոթություն՝

բոլոր պահեստամասերը պետք է հանձնվեն ԻՌՎ կենտրոնական պահեստ, որը գտնվում է ք. Էջմիածին Իսի-Է.Ե-Մոլինոյի փողոց 7,

ցանկում նշված պահեստամասերը պետք է լինեն չօգտագործված և պիտանելիությունը երաշխավորվի մատակարարի կողմից,

ձեռք բերվող պահեստամասերի քանակները կկանոնակարգվեն ՀՀ ՀՈՒ ԻՌՎ կողմից տրվող հայտերով, որոնք մատակարարի կողմից համաձայն հայտերի կտրամադրվեն պահանջ ներկայացնելուց 20-օրյա ժամկետում,

պահեստամասերը ըստ իրենց տեխնիկական պայմանների պետք է ունենան համապատասխան գործարանային փաթեթավորում:

Զանազան պահեստամասերի (ինժեներական /ճանապարհաշինական/ տեխնիկայի վերանորոգման պահեստամասեր) համար սահմանված միավորների նախահաշվային գները և տեխնիկական բնութագրերը

Հ/հ	Անվանումը	Չ/մ	Կատալոգային համարը	Միավորի գինը /ՀՀ դրամ/
	Բուլդոզեր Բ-10, S-170, 130			
1	Միջադիր (պղնձյա)	հատ	40201	1000
2	Ջրի շապիկի օղ	լրակազմ	40843	4000
3	Կափույրի կափարիչի ներդիր	հատ	700-40-2896	3000
4	Մանժետ 1,2-200x240-1 Բ-10	հատ	ԳՕՍ 8752-79	5000
5	Գլդոն երկկողապատ	հատ	24-21-170ՍՊ	190000
6	Օժանդակիչ գլդոն Բ-10	հատ	50-21-416ՍՊ	180000
7	Օժանդակիչ գլդոն S-130	հատ	24-21-171ՍՊ	127000
8	Բոցամուղ	հատ	14-69-117-ՍՊ	23000
9	Սկավառակ (կողային պտույտափոխանցիչի) մետաղական	հատ	16121	6000
10	Կողային պտույտափոխանցիչի առանցքակալ	հատ	2224ԿՄ	31000
11	Կողային պտույտափոխանցիչի առանցքակալ	հատ	228Ա	44000
12	Կողային պտույտափոխանցիչի առանցքակալ	հատ	70-42314	21000
13	Կողային պտույտափոխանցիչի առանցքակալ Բ-10	հատ	70-32417	19000
14	Կողային պտույտափոխանցիչի առանցքակալ Բ-10	հատ	70-32612	18000
15	Կողային պտույտափոխանցիչի առանցքակալ Բ-10	հատ	118	8000
16	Կողային պտույտափոխանցիչի առանցքակալ Բ-10	հատ	70-32315	15000
17	Դանակի հեղյուս և մանեկ	լրակազմ	Մ27	1000
18	Գործարկիչ շարժիչ	հատ	ՊԴ-23	2590000
19	Կարբյուրատոր Կ-125լ	հատ	Կ-125	56000
20	Շղթայակցման կցորդիչ ՊԴ-23	հատ	17-73-54	20000
21	Ռադիատորի կարճախողովակ	լրակազմ	42701	10000
22	Փոխանցումների փոխարկման երկժանի (դարձիչ)	հատ	50-12-565	59000
23	Դարձիչի մատ	հատ	50-12-581	45000
24	Մագնետո Մ-149Ա1 (Մ-149Ա1-3728.000)	հատ	Մ-149Ա1	65000
25	Փոկ հովհարի	հատ	11x16x1650	4000
26	Փոկ գեներատորի	հատ	11x12.5x1090	1000
27	Գլանների բլոկի գլխիկ	հատ	51-02-3ՍՊ	505000
28	Պարկուճ Ֆ-145	հատ	1466	27000
29	Պարկուճ Ֆ-150	հատ	51-0182	36000
30	Մխոց Ֆ-145	հատ	51-03-23	25000
31	Մխոց Ֆ-150	հատ	16-03-44	36000
32	Մխոցի օղ Ֆ-145	լրակազմ	ՍՏ51-03-115ՍՊ	30000
33	Մխոցի օղ Ֆ-150	լրակազմ	033404-2	39000
34	Երկժանանիվ	հատ	20-19-24	119000

35	Տանող անիվի գամասեղների լրակազմ	լրակազմ	24-19-22	10000
36	Տարվող կցորդիչի սկավառակ S-130	հատ	18-14-135ՍՊ	30000
37	Տանող անիվ Բ-10	լրակազմ	50-19-160-1	233000
38	Տանող անիվ S-130	լրակազմ	50-19-99	204000
39	Ձգիչ անիվ Բ-10 (ձախ)	լրակազմ	50-21-305-05ՍՊ	503000
40	Ձգիչ անիվ Բ-10 (աջ)	լրակազմ	50-21-306-05ՍՊ	503000
41	Ձգիչ անիվ S-130	լրակազմ	50-21-212	350000
42	Թերթիկավոր զսպան S-130	հատ	50-20-103ՍՊ	350000
43	Հենակային զսպան Բ-10	հատ	50-20-125ՍՊ	300000
44	Փոխանցման տուփի վերևի լիսերի հավաքակազմ	լրակազմ	50-12-246ՍՊ	249000
45	Փոխանցման տուփի ներքևի լիսեռի լրակազմ	լրակազմ	50-12-224ՍՊ	174000
46	Հարթաշերեփի հիդրոգլան Բ-10	հատ	131-26-108-02ՍՊ	660000
47	Հարթաշերեփի հիդրոգլան S-130	հատ	50-26-570ՍՊ	380000
48	Հարթաշերեփի շեղածման հիդրոգլանի նորոգման լրակազմ ԳՏ 160x80	լրակազմ	ԳՏ 160x80 (50-50-226)	10000
49	Փխրեցուցիչի հիդրոգլանի նորոգման լրակազմ	լրակազմ	50-50-225ՍՊ	10000
50	Թրթուր	հատ	50-22-2	33000
51	Թրթուրի հավաքակազմ (աջ, ձախ)	լրակազմ	ՉԴ-50-22-9ՍԲ	2220000
52	Ռադիատորի հավաքակազմ	հատ	Դ180-1301010	665000
53	Յուղի պոմպ	հատ	29-09-124ՍՊ	140000
54	Բարձր ճնշման վառելիքի պոմպի կարգավորիչ	լրկզմ	51-06-14ՍՊ	310000
55	Մեկնարկիչ 42.3708.000	հատ	42.3708.000	63000
56	Գլդոն միակողապատ	հատ	24-21-169ՍՊ	196000
57	Գլանների գլխիկի միջադիր	հատ	51-02-107ՍՊ	6000
58	Թրթուրի հեղյուս և մանեկ	լրակազմ	Մ20x1,5x62/30326-1	1000
59	Կողային դանակ (ձախ)	հատ	80-52-111-02	36000
60	Կողային դանակ (աջ)	հատ	80-52-112-02	36000
61	Կարտերի միջադիր	լրակազմ	700-40-4947	11000
62	Շարժիչի միջադիրների լրակազմ	հատ	Ռ/կ Դ-160	26000
63	Կարդանային լիսեռ	հատ	18-14-77-1	75000
64	Կարդանային լիսեռի կցորդիչ	հատ	20-14-23	80000
65	Միջնամասի դանակ	հատ	70-52-13	135000
66	Ներդրակ արմատական	լրակազմ	Ա-23.01-103-160սբՍ	30000
67	Ներդրակ շարժաթևի	լրակազմ	Ա-23.01-100-160սբՍ	30000
68	Ներդրակ շարժաթևի ՊԴ-23	լրակազմ	Ա23,01-54-130սբՊ2Ն	12000
69	Ջրի շապիկի խողովակ	հատ	2218	1000
70	Սկավառակ ՊԴ-23	հատ	738-4ՍՊ	7000
71	Վառելանութի զտիչ տարր S-130, Բ-10	հատ	51-70-146ՍՊ	2000
72	Տուրբոճնշակ ՏԿՐ 11 Ն3	հատ	ՏԿՌ 11Ն3	185000
73	Տուրբոճնշակ ՏԿՐ 8.5Ս3	հատ	51-54-10ՍՊ	233000
74	Փոխանցման տուփի նորոգ. լրակազմ ԿՊՊ S-130	հատ	1303	290000
75	Փխրեցուցիչի կանգնակ	լրակազմ	50-50-104ՍՊ	360000
76	Յուղի զտիչ տարր	հատ	50-26-490 ՍՊ	2000
77	Օդի զտիչ տարր	հատ	Ա41.10.000-02	7000
78	Ջրահովացուցիչի հավաքակազմ	հատ	130Ս.13.010-1S	580000
79	Տանող անիվ սեգմենտով S170,Բ10	հատ	50-19-182 ՍՊ	353000
80	Անվակունդ	հատ	50-19-145ՍՊ	445000
81	Տանող անիվի հեղյուս և մանեկ	հատ	Մ20x1,5-62	2000
82	Կողային պտույտափոխանցիչի պատյան ձախ S170	հատ	24-19-35	455000
83	Կողային պտույտափոխանցիչի պատյան աջ S170	հատ	24-19-36	455000
84	Կողային պտույտափոխանցիչի պատյան ձախ Բ10	հատ	50-19-141	250000
85	Կողային պտույտափոխանցիչի պատյան աջ Բ10	հատ	50-19-142	250000
86	Կարտեր առջևի S170,Բ10	հատ	51-01-156ՍՊ	300000
87	Կարտեր հետևի S170,Բ10	հատ	51-01-36	270000
	ԲՈՒԼԴՈԶԵՐ ԿԱՄԱՑՈ Դ 355			
88	Օդի զտիչի տարր	լրակազմ	6128-81-7042	95000
89	Վառելիքի զտիչ	հատ	600-311-8281	21000
90	Տուրբաճնշակ	լրակազմ	6502-12-9004	1395000
91	Գլանների գլխիկ	լրակազմ	6128-11-1012	4025000
92	Գլանի խցիչ	լրակազմ	6127-21-2251	65000
93	Գլդոն երկկողապատ	հատ	195-30-00453	740000

94	Գլդոն միակողապատ	հատ	195-30-00440	730000
95	Օժանդակիչ գլդոն	հատ	195-30-00106	370000
96	Հարթաշերեփի բարձրացման հիդրոգլան	հատ	195-63-13700	4200000
97	Սեգմենտի հեղույս և մանեկ	լրակազմ	195-27-12632	8000
98	Ձգիչ անիվ	հատ	195-30-00283	3590000
99	Ձգիչ անիվի նորոգման լրակազմ	լրակազմ	195-30-13251	2325000
100	Թրթուրի հավաքակազմ	լրակազմ	195-32-02-709	9500000
101	Թրթուրի ձգման մեխանիզմ	հատ	195-30-14170	710000
102	Արգելակման թմբուկ	հատ	195-22-11114	2850000
103	Ջրի պոմպ	հատ	6127-61-1008	720000
104	Ընդհանուր ականատ	հատ	195-32-21141	65000
105	Բույթ ընդհանուր	հատ	195-32-21151	30000
106	Բույթ հիմնական	հատ	195-32-31390	65000
107	Թրթուրի օղակ	լրակազմ	195-32-11127/37	145000
108	Ձգափոկ հավաքական	հատ	195-71-00094	1690000
109	Տանող համակարգ	հատ	195-27-11237	4335000
110	Գլխավոր ականատ	հատ	195-32-31380	45000
111	Հարթաշերեփի դանակի հեղույս և մանեկ	լրակազմ	195-71-11451/25	8000
112	Հարթաշերեփի կողային դանակ	հատ	195-71-11173/83	265000
113	Հիդրավլիքի զտիչ	հատ	175-60-27380	25000
114	Ձգիչ անիվի լիսեռ	հատ	195-30-13251	260000
115	Յուղի զտիչ	հատ	600-211-1230	37000
116	Յուղի զտիչ	հատ	3313283	26000
117	Ներդրակ արմատական	լրակազմ	6127-21-8071	370000
118	Ներդրակ շարժաթևի	լրակազմ	6127-31-3042	370000
	ԲՈՒԼԴՈԶԵՐ ՇԱՆՏՈՒԻ ՍԴ 42-3			
119	Թագագլխիկի մատ	հատ	175-78-21740	12000
120	Երկկողապատ գլդոն	հատ	31Ի-40-22000	810000
121	Միակողապատ գլդոն	հատ	31Ի-40-21000	725000
122	Հիդրավլիքի զտիչ	հատ	Պ175-60-27380	26000
123	Տրանսմիսիայի զտիչ	հատ	175-49-11580	15000
124	Վառելիքի զտիչ	հատ	6.126E+11	21000
125	Օ-օղ	հատ	195-27-12210	21000
126	Շարժիչի վերևի միջադիրների հավաքակազմ	լրակազմ	3800728	460000
127	Շարժիչի ներքևի միջադիրների հավաքակազմ	լրակազմ	4089391	460000
128	Գլանի պարկուճի կիպարար խցուկ	հատ	3088298	14000
129	Գլանի պարկուճի կիպարար խցուկ	հատ	3081489	7000
130	Գլանի պարկուճի կիպարար խցուկ	հատ	3011076	7000
131	Գլանի պարկուճի կիպարար խցուկ	հատ	3014668	13000
132	Գլանի պարկուճի կիպարար խցուկ	հատ	4000504	7000
133	Մխոցի օղերի լրակազմ	լրակազմ	4955975	90000
134	Շարժաթևի ներդրակներ	լրակազմ	205840	310000
135	Արմատական ներդրակների հավաքակազմ	լրակազմ	AR12271	650000
136	Ծնկաձև լիսեռի խցուկ	հատ	3648161	124000
137	Ծնկաձև լիսեռի խցուկ	հատ	3005886	115000
138	Շարժաթև	հատ	3811994	640000
139	Ծնկաձև լիսեռ	հատ	3347569	5300000
140	Բլոկ ցիլինդրա	հատ	3088301	9600000
141	Գոլովկա բլոկա	հատ	3176619	970000
142	Բոցամուղ	հատ	3016676	745000
143	Տուրբոկոմպրեսսոր	հատ	3803452	1645000
	ՇԱՐԺԻՉ ՏՄԶ 8486.10-02			
144	Օդի զտիչի տարր	հատ	6510-1109080	15000
145	Վառելիքի զտիչի տարր	հատ	840.1117040-01	1000
146	Յուղի զտիչի տարր	հատ	840.1012040-14	3000
147	Շարժաթև	հատ	8401100405	174000
148	Ներդրակ արմատական	լրակազմ	840100517	46000
149	Ներդրակ շարժաթևի	լրակազմ	8401004058	46000
150	Մեկնարկիչ	հատ	2501.3708-21	238000
151	Հրիչի ծող	հատ	840.1007 174-02	64000
152	Ծնկաձև լիսեռի վերևի հենակի տափօղակ	հատ	8401005193	5000

153	Ծնկաձև լիսեռի ներքևի հենակի տափօղակ	հատ	840.1005194-10	5000
154	Բաշխիչ լիսեռ	հատ	8461006015	505000
155	Գլանների գլխիկի միջադիր	հատ	840.1003213-02	2000
156	Կարտերի միջադիր	հատ	8421009072	8000
157	Վառելիքի ներցայտման առաջանցման կցորդիչ	հատ	842.1121010-10	440000
158	Շարժիչ	լրակազմ	8486.10-02	14700000
159	Վառելիքի բարձր ճնշման պոմպ	հատ	171-20	1245000
160	Փոկ Ի-11x21-1950	հատ	11-21-14-1950	15000
161	Ջրի մեխանիկական տվիչ	հատ	ՈՒՏ-200Դ	5000
	ԲՈՒԼԴՈԶԵՐ ԴՏ - 75			
162	Գլանի խցիչ Ա-41	լրակազմ	արտ. 406	5000
163	Ներդրակ արմատական Ա-41	լրակազմ	Ա23.01-98-20	13000
164	Վառելիքի բարձր ճնշման պոմպ	հատ	Ա-41/Ա01	380000
165	Վառելիքի մղման պոմպ	հատ	16-Ա30-8Ա-01	15000
166	Փոշարար	հատ	11ՏԱ-20ս 2-02	3000
167	Գործարկիչ շարժիչ ՊԴ-10	լրակազմ	Դ24 Ս01-4	200000
168	Մեկնարկիչ ՊԴ-10-ի	հատ	Ստ362-3708000	45000
169	Ռադիատորի կարճախողովակ	լրակազմ	ԴՏ75, Ա41	10000
170	Հարթաշերեփի դանակ	լրակազմ	150x16x18	95000
171	Թրթուրի մատ	հատ	Ա34-2-01Գ	2000
172	Թրթուրի օղակ	հատ	77. 34. 501	15000
173	Կողային պտույտափոխանցիչի նորոգման լրակազմ	լրակազմ	79.39.040Որ	72000
174	Առանցքակալ 7311Կ	հատ	ԳՕՍՏ 333-79	10000
175	Առանցքակալ 7313Կ	հատ	ԳՕՍՏ 333-79	12000
176	Առանցքակալ 7909Կ1	հատ	ԳՕՍՏ 333-79	21000
177	Պահող գլդոն	հատ	85.33.002Ա	42000
178	Գլդոնի ակ	հատ	54.31-021Ի	39000
179	Գլդոնի առանցք	հատ	85.31.018Բ-01	75000
180	Հիդրոգլանի նորոգման լրակազմ	լրակազմ	ՑՍ - 75	8000
181	Հիդրոգլանի նորոգման լրակազմ	լրակազմ	ՑՍ - 110	10000
182	Տանող անիվ	հատ	77.39.132	75000
183	Տանող անիվի լիսեռ	հատ	77.39.012Ա	265000
184	ՈՒղղորդող անիվ աջ հավաքակազմ	հատ	85.32.001	75000
185	ՈՒղղորդող անիվ ձախ հավաքակազմ	հատ	85.32.002	75000
186	Օդի զտիչ տարր	հատ	ԴՏ 75	7000
187	Կողային պտույտափոխանցիչի պատյան ձախ	հատ	162.39.103-02	145000
188	Ռադիատորի միջուկ ԴՏ-75	հատ	85ու.1301020	220000
189	Տուրբոճնշակ	հատ	ՏԿՐ 8.5Ս-6	220000
190	Տուրբոճնշակ	հատ	ՏԿՐ 8.5Ն1	180000
191	Սայլակային կախոցի հավաքակազմ (աջ)	հատ	85.31.002	364000
192	Սայլակային կախոցի հավաքակազմ (ձախ)	հատ	85.31.001	364000
	ԷՔՍԿՈՎԱՏՈՐ ԷՕ - 2621, HYUNDAI R260LC-9S , ԳՐԵՅԴԵՐ ԴԶ 99,122,143			
193	Փոշարար ԷՕ-2621	հատ	6Ա1-20ս2-40	17000
194	Սուզակային զույգ ԷՕ-2621	հատ	ՈՒ16Ս-15	24000
195	Յուղի պոմպ ԷՕ-2621	հատ	245-1403010	50000
196	Վառելիքի ցածր ճնշման պոմպ ԷՕ-2621	հատ	4ՈՒՏՆՄ-Տ-1111005	20000
197	Կողային դանակ ԷՕ-2621	լրակազմ	Դ-579.0100-07	20000
198	Միջնամասի դանակ ԷՕ-2621	լրակազմ	Դ-579.0100-06	100000
199	Հիդրոգլան հարթաշերեփի ԷՕ-2621	հատ	13.6500.000	157000
200	Հիդրոգլան սլաքի ԷՕ-2621	հատ	13.6100.000	210000
201	Հիդրոգլան սլաքի թեքման ԷՕ-2621	հատ	13.0920.000	170000
202	Հիդրոգլան հենակի բացման ԷՕ-2621	հատ	13.6110.000	135000
203	Հիդրոգլան շերեփի և թևի ԷՕ-2621	հատ	13.6600.000	130000
204	Հիդրոգլանի նորոգման լրակազմ ԷՕ-2621	լրակազմ	110x56x1120	5000
205	Փոխանցման տուփի նորոգման լրակազմ ԷՕ-2621	լրակազմ	238-Ռ-1700001-04	185000
206	Ջրի պոմպ ԷՕ-2621	հատ	240-1307010	35000
207	Վառելիքի զտիչ ԷՕ-2621	հատ	ՖՏ020-1117010	13000
208	Յուղի զտիչ ԷՕ-2621	հատ	240-1404010-Ա	6000
209	Գլանների բլոկի գլխիկ ԷՕ-2621	հատ	245-1003015-Բ1	410000
210	Ծնկաձև լիսեռ ԷՕ-2621	հատ	245-1005020-Բ	330000
211	Ծնկաձև լիսեռ ՎՏԶ-2048	հատ	Դ130-1005011	480000

212	Ամկաղոր Ե-702 փոխանցման տուփի նորոգման լ-կազմ	հատ	PK245-1701000	380000
213	Ամկաղոր Ե-702 սեղմովի սկավառակ	հատ	245-1601090	150000
214	Ամկաղոր Ե-702 տարվող կցորդիչի սկավառակ	հատ	245-1602052	155000
215	Գծային զտիչ R260LC-9S	հատ	31Q6-20340	21000
216	Թագագլխիկի մատ R260LC-9S	հատ	E262-5004	6000
217	Թագագլխիկի մատի կալան R260LC-9S	հատ	61EH-11150	5000
218	Կողային դանակ R260LC-9S	հատ	63E1-3534	52000
219	Հիդրավլիկ զտիչ R260LC-9S	հատ	31N4-01460	52000
220	Հիդրավլիկ զտիչ R260LC-9S	հատ	31N8 - 01360	7000
221	Յուղի զտիչ R260LC-9S	հատ	11E1-70140	15000
222	Վառելիքի զտիչ R260LC-9S	հատ	11E1-70210	12000
223	Վառելիքի զտիչ R260LC-9S	հատ	11LB-20310	20000
224	Վառելիքի զտիչ R260LC-9S	հատ	11E1-70010	8000
225	Օդորակիչի զտիչ R260LC-9S	հատ	11Q6-90510	20000
226	Օդի զտիչ R260LC-9S	հատ	11N6-27030	36000
227	Օդի զտիչ R260LC-9S	հատ	11N6-27040	20000
228	հատիչ դելտա F-20 հիդրոմուրճի համար	հատ	ԴՖ 20Բ-0260	480000
229	Դելտա F-20 հիդրոմուրճի նորոգման լրակազմ	հատ	ԴՖ-20Դ-0000	260000
230	Բոցամուղ ԴՀ	լրակազմ	Ա-01ՄՄ	19000
231	Դիմացի հարթաշերեփի դանակ ԴՀ	հատ	ՊՖՄ1Պ100Ս2005	69000
232	Դիմացի հարթաշերեփի դանակ ԴՀ	հատ	Ա-01ՖՄՄ	69000
233	Կողային դանակ ձախ ԴՀ	հատ	432191327	19000
234	Կողային դանակ ձախ ԴՀ	հատ	ՈԻ62.10.04.30.01.001-03	19000
235	Կողային դանակ աջ ԴՀ	հատ	225.21.00.00.008	19000
236	Կողային դանակ աջ ԴՀ	հատ	ԴՀ-122Ա.02.09.002-01	24000
237	Միջին հարթաշերեփի դանակ ԴՀ	հատ	225.07.04.00.004	70000
238	Միջին հարթաշերեփի դանակ ԴՀ	հատ	ԴՀ-122Ա.02.09.004-01	71000
239	Հիդրոբաշխիչ ԴՀ	հատ	200.07.04.00.004-01	190000
240	Մեկնարկիչ ԴՀ	լրակազմ	557.102.01.26	188000
	ԷՔՍԿԱՎԱՏՈՐ Ե-195Ա			
241	Բարձր ճնշման ճկախողովակ	հատ	2SC - 25 - 165 - 2700 - SFS/41,3/ - DKO-42x2/90°	48900
242	Բարձր ճնշման ճկախողովակ	հատ	4SP - 12 - 415 - 1050 - DKO-22x1,5/90° -DKO-22x1,5	14400
243	Բարձր ճնշման ճկախողովակ	հատ	4SP - 12 - 415 - 450 - DKO-22x1,5/90° - DKO-22x1,5	10300
244	Բարձր ճնշման ճկախողովակ	հատ	4SP - 12 -415 -650 - DKO-22x1,5/90° - DKO-22x1,5	11820
245	Բարձր ճնշման ճկախողովակ	հատ	2SC - 12 -275 - 2800 - DKO-22x1,5/90° DKO-22x1,5	16125
246	Բարձր ճնշման ճկախողովակ	հատ	2SC - 8 - 350 - 2100 -DKO-16x1,5/90° - DKO-16x1,5	12500
247	Բարձր ճնշման ճկախողովակ	հատ	4SH - 25 - 380 - 2450 - SFS/47,6/90° -DKO-42x2/90°	67800
248	Բարձր ճնշման ճկախողովակ	հատ	4SP - 16 - 350 - 650 - DKO-30x2 - DKO-30x2	20785
249	Բարձր ճնշման ճկախողովակ	հատ	4SH - 25 - 380 - 1250 - DKO-36x2 - DKO-36x2	38880
250	Բարձր ճնշման ճկախողովակ	հատ	4SH - 25 - 380 - 1250 - DKO-36x2 - SFS/47,6/90°	45120
251	Բարձր ճնշման ճկախողովակ	հատ	4SP - 19 - 350 - 1850 - SFS/41,3/ - SFS/41,3/	42480
252	Բարձր ճնշման ճկախողովակ	հատ	4SP - 19 - 350 - 2150 - SFS/41,3/ - SFS/41,3/	44910
253	Բարձր ճնշման ճկախողովակ	հատ	4SH - 25 - 380 - 2250 - SFS/41,3/45° - DKO-36x2	60000
254	Բարձր ճնշման ճկախողովակ	հատ	4SP - 19 - 350 - 2800 - SFS/41,3/ - SFS/47,6/90°	48690
255	Բարձր ճնշման ճկախողովակ	հատ	4SH - 25 - 380 - 3100 - SFS/41,3/ - DKO-36x2	72000
256	Բարձր ճնշման ճկախողովակ	հատ	4SP -12 - 415 - 1850 - DKO-22x1,5/90° - DKO-22x1,5	18900

257	Բարձր ճնշման ճկախողովակ	հատ	4SP - 12 - 415 - 950 - SFS/41,3/ - DKO-22x1,5	22500
258	Բարձր ճնշման ճկախողովակ	հատ	4SH - 25 - 380 - 1050 - SFS/41,3/ DKO-36x2	41400
259	Շարժիչի յուղի զտիչ	հատ	LF4056 կամ համարժեք	7380
260	Վառելիքի կոշտ մաքրման զտիչ	հատ	FS1094 կամ համարժեք	19800
261	Վառելիքի նուրբ մաքրման զտիչ	հատ	FF5074 կամ համարժեք	4950
262	Օդի զտիչ-էլեմենտ	հատ	A-41.10.000-02ՄՅ, A-41.10.000-01ՄՅ	7500
263	Խցիկի տաքացուցիչի զտիչ	հատ	NF 6003 կամ համարժեք	1800
264	Ապակի	հատ	125-00-23.70.001, որակը "Ստալինետե"	52000
265	Ապակի	հատ	125-00-23.70.002, որակը "Ստալինետե"	27900
266	Ապակի	հատ	125-00-23.70.006, որակը "Ստալինետե"	51500
267	Ապակի	հատ	125-00-23.70.100	123000
268	Ապակի	հատ	125-00-23-70.003	26500
269	Ապակի	հատ	125-00-23-70.004	34500
270	Ապակի	հատ	125-00-23-70.005	34300
271	Մատ հավաքական	հատ	3523-00-80.50.050-10, D=75մմ., L=325մմ	93700
272	Մատ	հատ	3523-00-50.00.410	68000
273	Մատ	հատ	3523-02-50.00.420	81600
274	Մատ	հատ	3523-02-50.00.005	71400
275	Տափօղակ հենակային	հատ	3523-00-80.00.011-10	2000
276	Տափօղակ հենակային	հատ	3523-00-80.00.011	1300
277	Ականոց	հատ	130-00-80.10.017-22, ն/տրամ.75մմ x ա/տրամ.95մմ x լայնությունը 85մմ	51000
278	Ականոց	հատ	130-00-80.00.003-02-Ո, ն/տրամ.75մմ x ա/տրամ.105մմ x լայնությունը 85մմ	68000
279	Ականոց	հատ	130-00-80.01.004-02, ն/տրամ.75մմ x ա/տրամ.95մմ x լայնությունը 77մմ	53000
280	Ականոց	հատ	130-00-80.10.022, ն/տրամ.80մմ x ա/տրամ.100մմ x լայնությունը 112մմ	62500
281	Ականոց	հատ	195-02-50.00.004	69500
282	Հիդրոգլան	հատ	3523-00-81.10.000	1100000
283	Հիդրոգլան	հատ	3523-00-81.20.000	1100000
284	Հիդրոգլան	հատ	3523-00-81.30.100	1250000
285	Հիդրոգլան	հատ	3523-00-82.10.000	750000
	ՏԵԽ. ՈՒՆԵՑՎԱԾՔ			
286	Օդի զտիչ տարր JCB 3CX	հատ	32/925682	32000
287	Յուղի զտիչ տարր JCB	հատ	02/100284	10000
288	վառելիքի կոշտ մաքրման զտիչ 'JCB 3CX'	հատ	32/925694	14000
289	Յուղի զտիչ 'JCB 3CX'	հատ	320/04133	16000
290	Վառելիքի մաքրման զտիչ 'JCB 3CX'	հատ	320/07155	10000
291	Օդի զտիչ perkins 'JCB 3CX'	հատ	32/91501802	25000
292	Օդի զտիչ հիմնական արտաքին 'JCB 3CX'	հատ	32/925682	30000
293	Հիդրավլիկ զտիչ 'JCB 3CX'	հատ	32/926001	28000
294	Բարձր ճնշման ճկախողովակ'JCB 3CX'	հատ	600/81142	15000
295	Բարձր ճնշման ճկախողովակ'JCB 3CX'	հատ	611/21800	20000
296	Բարձր ճնշման ճկախողովակ'JCB 3CX'	հատ	612/00100	25000
297	Բարձր ճնշման ճկախողովակ'JCB 3CX'	հատ	612/00800	32000
298	Բարձր ճնշման ճկախողովակ'JCB 3CX'	հատ	612/02900	40000

299	Բարձր ճնշման ճկախողովակ'JCB 3CX'	հատ	612/04100	44000
300	Բարձր ճնշման ճկախողովակ'JCB 3CX'	հատ	612/07700	46000
301	Բարձր ճնշման ճկախողովակ	հատ	U27L1010	5000
302	Բարձր ճնշման ճկախողովակ	հատ	U27L1410	5500
303	Բարձր ճնշման ճկախողովակ	հատ	U27L1450	5500
304	Բարձր ճնշման ճկախողովակ	հատ	U36L1210	9500
305	Բարձր ճնշման ճկախողովակ	հատ	U36L2010	10000
306	Բարձր ճնշման ճկախողովակ	հատ	U36L2060	10000
307	Բարձր ճնշման ճկախողովակ	հատ	U32L1410	7000
308	Բարձր ճնշման ճկախողովակ	հատ	U24L1010	4000
309	Բարձր ճնշման ճկախողովակ	հատ	U32L1010	6000
310	Բարձր ճնշման ճկախողովակ	հատ	U32L1210	6000
311	Բարձր ճնշման ճկախողովակ	հատ	U41L1010	10000
312	Պոմպ ՆԾ-100	հատ	ԳOUS 100-80	62000
313	Ցոյալապտեր	հատ	ՖԳ-304/305	7000
314	Պերֆերատոր COBRA 8318070201 ձող	հատ	3083320500	27000
315	Պերֆերատոր COBRA 8318070201 ձող	հատ	3083320800	27000
316	Պերֆերատոր COBRA 8318070201 ձող	հատ	3083321400	66000
317	Կտրիչ ատամ ԳՀՄ-2	հատ	01.06.010	35000
318	Կողային ատամ ԳՀՄ-2	հատ	01.03.290-1	35000
319	Շպլինդ ԳՀՄ-2	հատ	01.03.007	1000
320	Կլին ԳՀՄ-2	հատ	01.06.001	5000
321	Կոմպրեսորային կայան ԶԻՖ ՄԶԱ 9-ՊՎ6/07 օդի զտիչ	հատ	240-1109165/66/67	9000
322	Կոմպրեսորային կայան ԶԻՖ ՄԶԱ 9-ՊՎ6/07 յուղի զտիչ	հատ	240-1404010-Ա	10000
323	Կոմպրեսորային կայան ԶԻՖ ՄԶԱ 9-ՊՎ6/07 վառելիքի զտիչ	հատ	ՖS020-1117010	8000
324	Կոմպրեսորային կայան ԶԻՖ ՄԶԱ 9-ՊՎ6/07 ռետինե խողովակ ՎԳ-18 (18x25)	մետր	ՏՈՒ38.105998-91	7000
325	Կոմպրեսորային կայան ԶԻՖ ՄԶԱ 9-ՊՎ6/07 կարոնկա 50x25մմ	հատ	ԿԴՊ,ԲԿՊՄԿՄ,ԲՈՒ	10000
326	Կոմպրեսորային կայան ԶԻՖ ՄԶԱ 9-ՊՎ6/07 մուրճի հատիչ 25սմ	հատ	Պ-11/100	5000

Հավելված N 2
N ԲՄԱՊՁԲ-20/3-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել 2019թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ, քան 20.12.2019թ., ընդ որում՝		
			հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	զանազան պահեստամասեր (Ինժեներական /ճանապարհաշինական/ տեխնիկայի վերանորոգման պահեստամասեր)	34911150/5	145033268	145033268	145033268

Ծանոթություն՝ Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«ՍԼԱՅՔ» ՓԲԸ
Գլխավոր տնօրեն

Ա. ԱՀԱՐՈՆՅԱՆ

Հավելված N 3
N ԲՄԱՊՁԲ-20/3-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1

N ԲՄԱՊՁԲ-20/3-1 պայմանագրի

ԱԿՏ N _____

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն